Խաչ և բուրվառք՝ սկիհք ծախել,
Շուրջառ և զթագն վաճառել.
Այնչափ խաղնան աւանդատան
Ոչընչացոյց զամենեսեան.
Զբմնաց կազի, ոչ խատիֆան,
Ոչ աթլասի և ոչ քիմխան։
Ապա զվանքերն ալ կողոպտեց,
Ոսկին ւ արծաթ զանօթս թալնեց.
Զայնքան անթիւ գանձն ցըրվեց
Որ քանի բիւր դեկան ածեց։
Ցետոյ զամեն գրեանս ժողովեաց
Որ ի գրատան էին պահած,
Աւետարանք ոսկով գըրած
Արծաթապատ կողքով կազմած.
Անգիւտ գըրեանքն որ Լով կային՝
Սըսայ խաղնիցն ելեալ էին,
Ազնիւ գրքեր, շարակնոցնին,
Ցըրուեաց կորոյս զամենեսին։
Ցետոյ էառ ըզվախըճնին,
Եկեղեցեաց քար դարպասնին,
Ըզդպրոններն և զհոգէտներն,
Զայգիս, դրախտս և զպարտէզնին։
Էր յոյժ պճնող վատնող դրամին.
Կորոյս զամէնն և զիւր հոգին.
Նախնեացըն մեր յիշատակնին,
Ոչ մին չմնաց յեկեղեցին։
Սուղ ժամանակ մի վրայ անցին,
Մեռաւ Զիկմունտ արքայն Լեհին.
Զօրքն ամէն և մեծ իշխանքնին՝
Զմեծ որդին կու կամէին.
Նստաւ յաթոռըն հայրենի,
Արժանաժառանգ այն թախտի՝
Վլատիսլաւուս անուանի,
Որ էր հըզօր քաջ և արի.
Որ շուտափոյթ գնացեալ Մոսկով՝
Զյոլով քաղաքս աւերելով,
Զոմանս եսպան, զայլս գերելով
Եւ զապստամբս հնազանդելով.
Շատ քաջութիւն անդ առնելով
Աղեքսանդրու նըմանելով,
Էառ զքաղաքն, գաւառս յոլով,
Տիրեաց թախտին՝ որ է Մոսքով։
Սա գնաց ընդդէմ Օսմանին՝
Հզօր և յաղթող խօնդքարին
Ցորժամ եկեալ էր նա խօթին՝
Տիրել բոլոր Լեհաց ազգին.
Ունէր բազում հեծել ւ անթիւ
Եօթըն հարիւր հազար ի թիւ.
Իսկ նա չունէր վաթսուն հազար.
Ջնջեաց եսպան զամէնն խսպառ.
Փաշայք ամէն և վէզիրնին,
Եէնկիչէրիք և սպահինին,
Պէկլէր պէկիք և սէրտարնին,
Եայապաշիք և սօլախնին.
Աճէմօղլանքն և չօրպաճիքն,
Խառնիճաղանջքն և չուրանին,
Թօփճիքն և ըղտապաննին,
Բնաջինջ եղեն ի միասին։
Ապա Օսմանըն շըվարեալ,
Ինքն և իւր զօրքն նկուն եղեալ,
Վլատիսլաւին պատգամ յըղեալ,
Թէ, եկ, լեր դու ընդ մեզ հաշ-
[տեալ։

. . . . . .
. . . . . .
. . . . . .